


պատկելէն մի քանի ժամ առաջ տալով զայն: Աղարկին ստնկը նոյն նպատակով կը գործածուի քսանէն երեսուն հարիւրորդակրամ առնելով պատկելէն առաջ: — Արիւն թընելուն մէկ հատիկ դեղը՝ կատարեալ հանգստութիւնն է, վասն զի դիտուած է որ անոնք որ դադրած էին աւրիւն թընելէ՝ կրկին կը սկսին յոգնութենէ մը վերջ, Շատերուն արեան առջեւ կ'առնուի պարզ եփած կանանչեղէններ, ալիւրակերպ կերակուրներ և կաթ տալով. ուշադրութիւն պէտք է ընել որ թորքախտաւորին ո՞ր և իցէ կերածը տաք չըլլայ. միա ուտելը արգիւելու է՝ ըլլայ եփած ըլլայ հում: Իբր դեղ Բոսանթարթին (ergotine) մէկ հատիկ է և առնուելու է օրուան մէջ 4 կամ հինգ հազարորդաւ կրամ: Գիշերը արիւն թընող թորքախտաւորները պէտք են երկու ժամն անգամ մը արթնցնել, որպէս զի թընեն, հակառակ պարագային առտուն թընելու դժուարութիւններ կ'ունենան: Երբ հիւանդը չկրճուի մատնետունկի տերեւներու փոշին կարելի է յաջողութեամբ գործածել արեան դէմ. ինչպէս նաեւ *hydrastis canadensis* որ քրտինքին առջեւ ալ կ'առնէ: Սառի փոքրիկ կտորներ կուլ տալը՝ ինչպէս միզային գործարաններուն վրայ սառնելը օգուտներ կրնան ունենալ և պէտք է փորձուի. սակայն երբ արիւնը շատ զայ և կարելի չըլլայ դեղ տալ՝ այն ժամանակ *Iandi* ծծողը կարելի է գործածել մեծ յաջողութեամբ. սա գործիք մ'է՝ որու միջոցաւ հնչուիներ բանեցնելով բազուկին կամ ոտքերուն վրայ, նոյն տեղերն շատ արիւն կը բերուի մարմնոյն ուրիշ մասերէն, որոնց մէջ հետեւաբար կը նուազի արեան քանակութիւնը. այս կերպ գործելը կը համապատասխանէ չորս անգամ արիւնառութեան (*saignée*) որ հին ժամանակ գործածութեան մէջ էր. Գորլլամիին երեւելի գիտնականը զայն տարիներ գործածած է՝ առանց ո՞ր և իցէ անհայտողութեան մը հանդիպելու:

Հազր: — Երբ հազը չափազանց չէ և հիւանդը միանգամայն կը թընէ, պէտք

չէ առջեւն առնուի, բայց երբ հազալու դժուարութիւններ ունենայ և ընդհանուր նեղութիւն մը զգայ՝ այն ժամանակ պէտք է դիմել հազի սովորական դեղերուն, մասնաւորապէս մորֆինին. Արաուփան իր հաստատութեան մէջ կը գործածէ հետեւեալ դեղագիրը. — մարուք *terpinol* 10 կրամ, հալեցնելով զայն 10 կրամ զուտ ալցոլի մէջ և աւելցնելով ասոր հինգ կրամ որժաջուցիչ ընկոյզ. երբ պէտքը զգացուի ասոր վրայ ալ կարելի է մի քիչ մորֆին աւելցնել: — Երբ թորքախտաւոր մը շարունակ գլխու ցաւեր ունի որ միշտ երթալով կը շառնան և *ménigite* կասկած կու տայ, այս պարագային ամենալաւ դեղն է քլուակերպի ներմուծումներն կուրծքին մօտ: — Թորքախտաւոր մը՝ իր հիւանդութեան երեւոյթներուն առջեւն առած ըլլալուն համար պէտք չէ ինքզինքը առողջացած կարծէ, պէտք է դեռ երկայն ժամանակ համբերութեամբ և ճշգրտութեամբ հետեւի բժշկին ըսածներուն:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՐՏԵԱՆՆԵՐ

Շարաշարելի



Ձ Ա Ն Պ Ա Ն Ը

Ա՛րքն ամպերու ծիրանիին մէջ փարփառ կը թաղուի հին զանգակատունը դիպին. Հո՞ն կը տանի աղօթքներուն իր բարբառ՝ Հինչո՛ւն, ինչպէս ժայթքող հնձանքը ուղիւն:

Արշալոյսին և իրիկունս դէմ այսպէս կ'երգէ, կու լայ կապոյտին մէջ՝ որ Աստուած իրեն մօտիկ՝ հին դարերէն լուսաղէս՝ կ'ունենընդրէ հողիներու երգն ու լաց:

Ի՛նչ փնդիւններ բխլ կ'երկունս մէջ ցլերցան, Սիրա՛ մը տանին և կամ հողի մը անձայն՝ Կեօթազգ մօրմէն կամ մեռնողէ մը արգար:

Ծնի՛ր գեղջուկին հուսարն որչափ որ տե՛ն՝ Պիտ՛ բարբառի ույզ խընկոտ հոռւն անդադար, Խաչին սիրով՝ որ զմեթիքին ծայր քիւն:

Ահարոն